XXI ԴԱՐԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

Ոչ ոք չի առարկի, որ մենք ապրում ենք այնպիսի դարաշրջանում, որի փոփոխությունների թափն ու արագությունը անընդհատ աճում են: Փոխվում է ոչ միայն աշխարհը, այլեւ նրա մասին մեր պատկերացումները: Դրա հետ մեկտեղ, շատ հաճախ չենք հասցնում ժամանակին գիտակցել այդ փոփոխությունների գործընթացի ամբողջ խորությունն ու էությունը, ինչն էլ մեզ ստիպում է նահանջել, զիջել դիրքերը մրցակցության պայքարում:

Վերջին 20 տարիների ընթացքում լուրջ փոփոխություններ են կատարվել աշխարհաքաղաքականության, աշխարհատնտեսության եւ աշխարհամշակութային տարածություններում: Մի ակնթարթում աշխարհը կրկնաբեւեռից վերածվեց միաբեւեռի. եւ մենք հետեւում ենք (ականատես ենք) որոշ տերությունների կործանման եւ մյուսների առաջացման ընթացքին:

Այսօր երկու գոյաբանական (օնտոլոգիական) պատկերացումների (ազատական-ժողովրդավարական եւ մարքսիստական) համընդհանուր հակազդումների հարթությունից մենք տեղափոխվել ենք աշխարհկառուցման բարոյական եւ էթիկական նորմերի (համընդհանուր) ճշգրտման հարթություն, այլ կերպ՝ տարբեր մշակույթների եւ քաղաքակրթությունների երկխոսության եւ բախումների հարթություն:

Արդի աշխարհի՝ որպես հրատապ, չլուծված խնդիրներ մնում են.

1. Կառավարման արդյունավետ համակարգերի մշակում եւ կառուցում, որոնց բացակայության պատճառով կոռուպցիան շարունակում է արգելակել հասարակության զարգացումը:
2. Տնտեսական զարգացումը չի հանգեցնում աղքատության կրճատման: Պառակտումը հարուստ եւ աղքատ երկրների միջեւ չի կրճատվում: Աղքատ երկրների քանակն ավելանում է, հասարակություններում սաստկանում է սոցիալական մեկուսացման խնդիրը, բարեփոխումները չեն ստանում բնակչության օժանդակությունը:
3. Սոցիալական անարդարության եւ անհավասարության զգացումը բարենպաստ հիմք է ստեղծում կա՛մ անբովանդակ քաղաքական պոպուլիզմի արտահայտման, կա՛մ կառավարման հավակնոտ (ավտորիտար) միջոցների կիրառման համար: Սաստկանում են լարվածությունը եւ վտանգի ու տագնապի համապարփակ զգացումը:
4. Ժողովրդավարական գործընթացների ակնհայտ դանդաղեցման հետ մեկտեղ, նկատվում է արմատական իսլամական գաղափարախոսության տարածում, որը, արմատական, գոյակցության բոլոր սկզբունքների խախտման մեթոդներով, կուտակված խնդիրների լուծման ուղիների առկայության պատրանք է ստեղծում: Դա էլ բարենպաստ հիմք է ահաբեկչական շարժումների սաստկացման եւ ամբողջ աշխարհում անհանդուրժողականության եւ դիմակայման մթնոլորտի շիկացման համար:

5. Գիտատեխնիկական առաջխաղացման խորացումն ու ընդլայնումը մասսայական ոչնչացման զենքի տարածման լրացուցիչ սպառնալիք են ստեղծում, ինչը աշխարհն առավել խոցելի է դարձնում:
6. Արդեն միայն զարգացած երկրներում չէ, որ նկատվում է ծերացման ֆենոմենը, նոր վիրուսների երևան գալը՝ համավարակության (պանդեմիա) վտանգը: Սպիդի կողքին հայտնվում են նոր տեսակի վիրուսներ, որոնք կարող են արագ տարածվել ամբողջ աշխարհով մեկ՝ թողնելով ավերիչ ազդեցություն, հատկապես առողջապահության թույլ զարգացած համակարգ ունեցող երկրներում:
7. Բանավիճային է մնում կլիմայի փոփոխության եւ դրա հետեւանքների հարցը, որն, ընդհանուր առմամբ, մարդկանց մեջ վախի զգացողություն է առաջացնում:

Թվարկված խնդիրները հարյուրամյակի մարտահրավերներ կարելի է անվանել միայն հասկանալով, թե ապագայի այս կամ այն սցենարի զարգացման համար, որ խնդիրների լուծումը կլինի վճռորոշ:

Հասկանալու համար ապագայից եկող մարտահրավերները, մենք պետք է կարողանանք կանխագուշակել այդ ապագան: Իսկ գուշակելու համար պետք է մեր մտածելակերպը փոխելու եւ նորը՝ արդեն ստեղծված գիտելիքները ընկալելու (ըմբռնելու) ընդունակություն ունենանք, իսկ եթե ցանկանում ենք ճեղքում կատարել, ապա, պետք է ստեղծենք 21-րդ դարին համահունչ գիտելիքներ:

Այսպիսով, 21-րդ դարի հիմնական մարտահրավերը իրականության մասին պատկերացումները փոխելու մարդու ունակությունն է:

ՍԽԵՄԱ 1



ՍԽԵՄԱ 2



որտեղ S-ը իրադրությունն է, P-ն՝ պատկերացումները

Առանց արդի աշխարհի մասին պատկերացումները փոխելու, զարգացումն անհնար է: Այսօրվա աշխարհի մասին պատկերացումների փոփոխությունն ապագայի աշխարհի պատկերացումների հնարավոր փոփոխությունների շուրջ խորհելու շանս է տալիս: Պատկերացումների փոփոխությունը հանգեցնում է իրականության փոխմանը: Իրականության փոփոխումը հանգեցնում է իրականության մասին պատկերացումների փոփոխմանը:

Այսպես, օրինակ, եվրոպական եւ ամերիկյան տնտեսագետները նոր տնտեսության համար վարքագծի նոր կանոններ են ձեւավորում եւ փորձում են

իրականացնել անցումը նոր համակարգին, որի էությունն այն է, որ ժամանակակից տնտեսության կորիզը գիտելիքների եւ այդ գիտելիքների արտադրությունն ապահովող ենթակառուցվածքների ստեղծումն է: Դա այն դեպքում, երբ հայ տնտեսագետները աշխատում են անցնել ավանդական տնտեսության ակնհայտորեն արդեն հնացած մոդելին:

Պատկերացում կազմելով մտածողության սխեմաների մասին, փորձենք պատկերացնել ապագան, նկարագրելով նրա ընդհանուր, հիմնական ուրվագծերը:

Որպեսզի ընդհանուր կերպով ըմբռնենք Հայաստանի առջեւ կանգնած մարտահրավերները, մենք առաջարկում ենք աշխարհի ապագայի երեք հնարավոր սցենար: Որից հետո՝ նախագծել այդ սցենարները Հայասատանի համար եւ հստակեցնել Հայաստանի առաջիկա տասը տարիների օրակարգը:

Առաջին սցենար

Ամերիկյան աշխարհ, որը ենթադրում է աշխարհում Ամերիկայի միացյալ նահանգների գերիշխող դերի պահպանում: Ամերիկայի միացյալ նահանգները պատասխանատու կլինեն համաշխարհային անվտանգության համակարգի համար, նրա ռազմական հզորությունն այլընտրանք չի ունենա: Համաշխարհային հանրության աչքերում ամերիկանացումը եւ գլոբալիզացումը կնույնականացվեն (կինդենտիֆիկացվեն), հակաամերիկյան տրամադրությունները կսաստկանան: Համաշխարհային տնտեսության համակարգում Ամերիկան կպահպանի իր գերիշխող դերը, նրա տնտեսությունը կմնա ամենաճկունն ու հարաճուն (դինամիկ) զարգացողը, ամբողջ աշխարհին ի ցույց դնելով նոր տնտեսության՝ գիտելիքի տնտեսության, հայեցակարգի հնարավորությունները: Ամերիկյան կեցության տարածումը կհանդիպի լուրջ հակազդեցության, այդ թվում եւ եվրոպական հանրության կողմից:

Երկրորդ սցենար

<u>Հակամարտության սցենարը</u> ենթադրում է արմատական կրոնական շարժումների կտրուկ ակտիվացում, որոնք կմիավորվեն մի կողմից ամերիկանացման դեմ, մյուս կողմից՝ ընդհանուր նույնականացման որոնումներրում: Արեւմտյան նորմերին եւ արժեքների մարտահրավեր կնետվի, այսինքն, կասկածի տակ կառնվի արեւմտյան արժեքները՝ որպես համաշխարհային, ընդունելու հարցը:

Այդ գործընթացը կուղեկցվի ահաբեկչական շարժումների տարածմամբ: Չի բացառվում արմատական կրոնական նույնականացման քաղաքականությունից դրդված համընդհանուր շարժման առաջացման հնարավորությունը, որը կարող է մարտահրավեր նետել խաղի գլոբալ մասնակիցներին: Կսաստկանա ահաբեկիչների կողմից մասսայական բնաջնջման զենքին տիրելու սպառնալիքը, ինչը կհանգեցնի սպառազինությունների մրցավազքի նոր փուլի, որի հիմնական նպատակը կլինի ազգային շահերի պաշտպանությունը: Խաղի գլոբալ մասնակիցները ստիպված կլինեն

կիրառել նախազգուշական ներխուժումներ այլ երկրների տարածքներ, միջազգային կազմակերպությունների դերն անխուսափելիորեն կթուլանա: Կտիրի ընդհանուր վախի եւ անվստահության մթնոլորտ: Ընդհանուր առմամբ, սպասվում է գլոկալացման կամ հակագլոբալացման ուժգնացում:

Երրորդ սցենար

Քաղաքակրթությունների երկխոսությունը ենթադրում է, որ գլոբալացումը կկորցնի արեւմտյան դեմքն ու խառնվածքը: Համաշխարհային միավորման գործընթացներում կուժեղանա ոչ արեւմտյան քաղաքակրթությունների դերը, մշակութագիտական (կուլտուրոլոգիական) եւ աշխարհայացքային հակասությունների լուծումը կիրականացվի մարդասիրական քաղաքակիրթ երկխոսության ճանապարհով: Բացառված չէ կայուն տնտեսական աճի հնարավորությունը, որը կգլխավորեն Չինաստանը եւ Հնդկաստանը: Չինաստանի եւ Հնդկաստանի տնտեսության ծավալները, կայուն աճը կվերածեն այդ երկրները խաղի գլոբալ մասնակիցների՝ ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական դաշտում, ինչն էլ հրատապ կդարձնի գլոբալ քաղաքակրթությունների գոյակցության ձեւերի որոնումները եւ տարածություն կստեղծի տեղային (լոկալ) քաղաքակրթությունների ինքնուրույն գոյության համար:

Ակնհայտ է, որ այս սցենարներից եւ ոչ մեկը ճիշտ այդ կերպ չի իրականանա, բայց առաջիկա տասնամյակի այս կամ այն ժամանակահատվածում միտումները կդրսեւորվեն այս սցենարներում բերված հիմնական փաստարկների տեսքով: Ընդ որում, մեր գնահատականներով, առաջիկա տասը տարիներին առավելագույնս կդրսեւորվեն առաջին սցենարում բերված, երկրորդ տասնամյակում՝ երկրորդ սցենարում բերված միտումները, իսկ երրորդ տասնամյակում առավել կդրսևորվի երրորդ սցենարը:

Այժմ անհրաժեշտ է վերոնշյալ համընդհանուր սցենարներից ելնելով, բացահայտել Հայաստանի առջեւ կանգնած հիմնական մարտահրավերները:

Առաջին սցենարի շրջանակներում (ամերիկյան աշխարհ), ապագայում խաղաղությունը կապահովի Ամերիկայի միացյալ նահանգների եւ ՆԱՏՕ-ի ռազմական հզորությունը: Նախապես հայտնի կլինեն աշխարհակարգի կանոնները, ղարաբաղյան խնդիրը կլուծվի բանակցությունների շրջանակներում՝ միջազգային կազմակերպությունների ակտիվ մասնակցությամբ: Արդյունավետ կընթանա Թուրքիայի անդամակցության գործընթացը Եվրոմիությանը, ինչը կբերի Թուրքիայի հետ սահմանների բացմանը: Իսկ Հայաստանի համար դա նշանակում է ելք դեպի ծով եւ օտարերկրյա ներդրումների լայնածավալ ներգրավում: Աստիճանաբար կվերականգնվեն տարածաշրջանային միավորման գործընթացները, ինչը տարածաշրջանում՝ Հայաստանի գերակայող դերի վերականգնման հնարավորություն կտա՝, որպես նոր տնտեսության հայեցակարգին բնորոշ նոր կանոնների եւ վարքագծի նորմերի կրող եւ տարածմանը նպաստող (պրոմոուտեր):

Հակամարտության սցենարը կսրի թուրք ժողովրդի ազգային նույնականացման (իդենտիֆիկացման) խնդիրը, հրատապ կդառնա վերափոխվող աշխարհում ազգային նույնականացման փնտրտուքի խնդիրը, կսաստկանան կրոնական հոսքերն ու միտումները, հարցականի տակ կդրվի Թուրքիայի ինտեգրացումը Եվրոմիությանը: Հայաստանը կհայտնվի աշխարհի երկու խոշորագույն քաղաքակրթությունների պառակտման եւ դիմակայության եզրին:

Հայաստանի հիմնական խնդիրը կլինի անվտանգության ապահովումը, քանի որ կուժեղանա տեղային ռազմական հակամարտություններում մասսայական բնաջնջման զենքի կիրառման վտանգը:

Միջազգային ասպարեզում Ռուսաստանի դիրքերի թուլացումը կհանգեցնի նոր ռազմական ուսմունքի (դոկտրինայի) մշակման անհրաժեշտության: Շարունակվող շրջափակումը կարգելակի Հայաստանի տնտեսական աճը, կավելացնի քաղաքական ռիսկերը՝ դրանից բխող բոլոր հետեւանքներով: Ղարաբաղյան խնդրի խաղաղ կարգավորման տարբերակը կդրվի կասկածի տակ:

Մասնավոր փոխանցումները կմնան գերակշռող՝ տնտեսական աճի օժանդակման գործում, եւ, որպես հետեւանք, ֆինանսաբանկային համակարգի հուսալիությունը կհամարվի առավել արդիական խնդիրներից:

Երրորդ սցենարի տեսանկյունից (*քաղաքակրթությունների երկխոսություն*) առավել հրատապ կլինի ազգի ինքնանույնականացման խնդիրը, ինչը պայմաններ կստեղծի հայ ժողովրդի անցյալի, ներկայի եւ ապագայի վերաիմաստավորման համար:

Անցյալի վերաիմաստավորումը, նախեւառաջ, պետք է հնարավորություն տա մեզ բացահայտել նույնականացման այն յուրահատկությունը, որը հայերին թույլ է տվել ապրել տարբեր կրոնական դոգմաներով եւ տնտեսական-մշակութային կեցութաձեւերով քաղաքակրթությունների շրջանակներում, ընդ որում, պահպանելով իր ազգային նույնությունը եւ դրանով իսկ առաջադրելով քաղաքակրթությունների եւ խաղաղ գոյակցության երկխոսության բանաձեւը: Կծագի ինքնուրույն զարգանալու ուղիների որոնման, ցեղասպանության հիմնական պատճառների վերաիմաստավորման, այլ քաղաքակրթությունների հետ գոյակցության սեփական ուսմունքի (դոկտրինայի) մշակման անհրաժեշտություն: Քաղաքակրթությունների գոյակցության սեփական ուսմունքը աշխարհին ներկայացնելը կդառնա 21-րդ դարում հայ ժողովրդի գլխավոր առաքելությունը:

Ներկայացված համընդհանուր սցենարների շրջանակներում Հայաստանի հիմնական մարտահրավերները ուրվագծելով, առաջարկում ենք առաջիկա տասնամյակի հետեւյալ օրակարգը:

1. Մտավոր աղքատության հաղթահարում

Կառավարման արդյունավետ համակարգի ստեղծում, որը ժամանակակից տեսական մեկնաբանությամբ ենթադրում է նախեւառաջ մտավոր կարողությունների աճ եւ ազգի մտավոր աղքատության հաղթահարում (սրա տակ հասկանում ենք մտածողության հմտության անհրաժեշտություն, տեղեկատվության կուտակում եւ գիտելիքի ստեղծում): Ակնհայտ է, որ երկարաժամկետ աճի ապահովումը հնարավոր է միայն բավականաչափ մտավոր կարողության (պոտենցիալի) առկայության դեպքում: Միայն կառավարման որակյալ համակարգ ստեղծելու, աշխարհակարգի արագ

փոփոխվող պայմաններին հարմարվելու, իրադարձությունների ընթացքը կանխորոշելու ընդունակ ազգն է ի վիճակի կառավարելու զարգացումը այս դարում։

Տեխնածին փաստարկների հնարավոր դրսևորումների շրջանակներում ակնհայտ է, որ ժամանակի ընթացքը արագանում է եւ դա լուրջ հետք է թողնում կենսագործունեության բոլոր ոլորտների վրա։ Որպես արդյունք, կառավարման համակարգը պետք է լինի ինքնահարմարվող արագ փոփոխվող աշխարհում։ Մենք պետք է դառնանք բարձր մտավոր կարողություններով ճկուն /մոբիլ/ ազգ։

2. Հայ ժողովրդի նույնականացման խնդիրը

Ավելի պարզ դա նշանակում է պատասխանել հետեւյալ հարցերին. «Ո՞վ ենք մենք», «Ինչո՞վ ենք տարբերվում մյուսներից», «Ինչպիսի՞ն է մեր գիտակցված արժեքների համակարգը», «Ի՞նչը այդ համակարգում պետք է փոփոխվի», «Ի՞նչ է ձեռքբերովին եւ արհեստականը», «Ինչի՞ց մենք պետք է ազատվենք, ի՞նչը պետք է ակտիվացվի եւ արդիականացվի»։

Այս տեսանկյունից անհրաժեշտ է որոշակիացնել մեր տեղը քաղաքակրթությունների երկխոսության մեջ՝ հավակնելով ինքնուրույն տեղային (լոկալ) քաղաքակրթության։ Օրակարգի այս հարցի անտեսումը կարող է հանգեցնել նրան, որ մենք ստիպված կլինենք նույնականացնել մեզ այս կամ այն գլոբալ քաղաքակրթությանը, օրինակ, ըստ Խանգտինգտոնի՝ արեւտյան, ուղղափառ, չինական, ճապոնական, իսլամական, լատինաամերիկյան, աֆրիկյան քաղաքակրթությանը։

3. Ազգի անվտանգության ապահովման խնդիրը

Անվտանգությունն իր մեջ ներառում է ֆիզիկական, տնտեսական, քաղաքական եւ մշակութագիտական անվտանգությունը։

Ֆիզիկական անվտանգությունը ենթադրում է ռազմական ուսմունքի (դոկտրինայի) ճշգրտում եւ տարբեր ռազմական կառույցների հետ համագործակցության խնդրի լուծում։ Զինված ուժերը պետք է պատրաստ լինեն ապագայի վատագույն զարգացումներին, իսկ ամբողջ հայ բնակչությունը ունենա ինքնապաշտպանության հմտություն՝ թե՛ ահաբեկչական գործողությունների, եւ թե՛ հակառակորդի կողմից մասսայական բնաջնջման զենքի կիրառման դեպքերում։

Քաղաքական անվտանգությունը ենթադրում է կառավարման արդյունավետ համակարգի ստեղծում եւ պահպանում, տարբեր սպառնալիքների եւ ծայրահեղ իրավիճակների դեպքում որոշումներ կայացնելու և իրականացնելու ունակ իշխանական ինքնուրույն եւ անկախ համակարգ։

Տնտեսական անվտանգությունը նշանակում է շրջափակման եւ այլ ծայրահեղ իրավիճակներում գործելու ունակություն։ Տնտեսական անվտանգությունը նաեւ ֆիզիկական, ֆինանսական եւ մարդկային արժեքների կուտակմամբ պայմանավորված կայուն տնտեսական աճի համար հուսալի հիմքի ապահովումն է։ Ակնհայտ է, որ այդ համակարգը կգործի ոչ միայն Հայաստանում, այլեւ ամբողջ հայությունը միավորող ցանցային տարածությունում։

Ընդհանուր առմամբ, տնտեսական, քաղաքական եւ մշակութաբանական պատկերացումները պետք է հաշվի առնեն ազգի աշխարհագրական եւ վիրտուալ ապակենտրոնացման առանձնահատկությունները՝ որպես զարգացման հզորության ուժգնացման առանցքային փաստարկ։

Ֆինանսական համակարգի կայունության ապահովում, ինչպես նաեւ սոցիալական պաշտպանության բազմաստիճան համակարգի ստեղծում, որը կհիմնվի երեք սյուների վրա՝ առողջապահություն, կրթություն եւ կենսաթոշակային ապահովում։

Մշակութաբանական անվտանգությունը ենթադրում է ազգային յուրօրինակության պահպանում եւ պաշտպանություն օտար, ագրեսիվ ֆունդամենտալիստական հոսանքների ազդեցությունից։

Այլ կերպ, պետք է իրագործվի վախի հաղթահարման քաղաքականություն, այն է՝ արագ փոփոխվող աշխարհում վտանգը հաղթահարելու պատրաստակամության ապահովում եւ վստահություն։

«Եղիր պատրաստ դժվարին պայմանների եւ ապրելը ավելի հեշտ կլինի»։

Եզրակացություններ՝

ապագայի տեսիլքը առաջադրում է այդ ապագան, ձեւավորում է սպասելիքները եւ դառնում գործողության ղեկավար սկզբունք։

Եթե մենք ուզում ենք կառուցել պայծառ ապագա, մենք պետք է սովորենք երազել։

Շնորհակալություն ուշադրության համար։

Տ. Ս. Սարգսյան, տնտեսագիտական գիտ. թեկնածու,
Անցումային հասարակության հետազոտությունների ինստիտուտի տնօրեն

Լրացուցիչ տեղեկատվություն՝
www.cia.gov/nic կայք